ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸՆ ԸՍՏ ՊՏՂՈՄԵՈՍԻ ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

Դոցենտ Մ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Անցյալի քարտեզների տվյալները առավել մանրամասն ու մասնագիտական սկզբունքով են տրված Կղավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկում»[1], որը մինչև այսօր չի օգտագործվել I դարի իրադրությամբ անցյալի ռեգիոնները պատկերելու համար։ Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկում» տեղանքի բնաաշխարհագրական մանրամասները տրված են կոորդինատներով՝ աշխարհագրական լայնությամբ ու երկայնությամբ։ «Աշխարհագրական ձեռնարկում» լայնության ու երկայնության տվյալներով ներկայացված են Հայաստանի (Մեծ Հայքի) այն ժամանակի 86 բնակավայր, լեռնաշղթաներն ու առանձին լեռների գագաթները, ջրային ցանցը՝ ծովերն ու լճերը, ինչպես նաև վարչական սահմանները, այդ ժամանակ գոյություն ունեցող նահանգները և այլ մանրամասներ։ Այդ բոլորը ներկայացված է քարտեզագրական ճշտությամբ, հեղինակը հաշվարկել է համարյա բոլոր կարևոր կետերի աշխարհագրական կոորդինատները այնպիսի ճշգրտությամբ, որ յուրաքանչյուր հատված հնարավոր լինի տեղադրել քարտեզի վրա հարազատորեն։

«Աշխարհագրական ձեռնարկի» ուսումնասիրությունները պարզել են, որ Պտղոմեոսը իր աշխատության տվյալների հիման վրա քարտեզներ չի կազմել և նրա անունով գոյություն ունեցող քարտեզները կազմված են հետագա տարիներին։ Մոտավորապես 400 թ. Մարկիան Հերասկը օգտվել է Պտղոմեոսի աշխատությունից, սակայն քարտեզների մասին հիշատակություն չունի[2]։ Նույնը պետք է ասել և «Աշխարհացույցի» վերաբերյալ. նրա հեղինակը օգտվել է Պտղոմեոսի աշխատության Պապպոս Ալեքսանդրացու համառոտագրած տեքստից, բայց քարտեզների մասին հիշատակություն չունի[3]։ Բազմաթիվ ուսումնասիրություններ են կատարել մեր օրերում Լեո Բագրովը. Մյուլլերը և ուրիշներ, որոնք հանգել են այն եզրակացության, թե «Աշխարհագրական ձեռնարկի» առկա քարտեզները տարբեր դարաշրջանների գործեր են, որ վերագրված են Պտղոմեոսին, սակայն վերծանված են Ագաթագեմոնի, Մաքսիմոս Պլանուդեսի և այլոց կողմից[4]։

---

[1] *Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկի» բազմաթիվ ձեռագրերից հրատարակել են* Coralus Frid, Augustus Nobbe (Lipsiae, 1813—1845), Coralus Müllerus Voluminus (Parisiis, 1881, 1901), E. L. Stevenson (New York, 1932), A. Codazzi (Milano, 1950).

[2] *Տե՛ս* M. Heracka, Periplus *աշխատությունը։*

[3] „Армянская география VII века", издал К. Патканов. A. Soukry, Geographie de Moisse de Corene or 1832, 1881.

[4] L. Bagrow. The origin of Ptolemy's Geographia, Stockholm, 1938, *էջ 319—328.*

Պտղոմեոսի աշխարհագրական կոորդինատները, ինչպես պարզվում է ներկա ուսումնասիրությամբ, հաշվարկված են իր չափերով փոքր երկրագնդի մակերևույթի վրա՝ ուղեծրերի երկարությամբ (գեոդեզիական եղանակով), ուստի խոշոր մասշտաբի քարտեզ կազմելու դեպքում անցյալում ներկայացված տարածքը չի կարող համատեղվել ներկայիս հաշվումներով ստացված համեմատաբար մեծ երկրագնդի՝ խոշոր շառավիղ ունեցող գնդի մակերևույթի նույն տարածքի հետ։ Անցյալում մասնագետները չեն օգտագործել Պտղոմեոսի տվյալները խոշոր մասշտաբի քարտեզներ կազմելու համար, որովհետև գնդի փոքր լինելը պարզվել է վերջերս միայն. այդ տվյալները ներկայիս քարտեզագրական ցանցի վրա տեղադրելիս աշխարհագրական մանրամասները իրենց տեղերում չեն ստացվել և խառնիճաղանճ պատկեր է ստեղծվել քարտեզի տարբեր մանրամասների տեղադրումից, որը և ստիպել է հրաժարվել Պտղոմեոսի տվյալներով մեծ մասշտաբի քարտեզներ գծերծանելուց։

Պտղոմեոսի ներկայացրած կոորդինատները հաշվարկված են այնպիսի մեծության գնդի վրա, որի շառավիղը շուրջ հազար կիլոմետրով կարճ է ներկայիս հաշվումներով ստացվածից. այդ հետևանքով Պտղոմեոսի հաշվարկումներում լայնություններն ու երկայնությունները իրականից զգալիորեն մեծացված են։ Յուրաքանչյուր կետի աշխարհագրական լայնությունն ու երկայնությունը ստացված է ըստ նախորդ կետի կոորդինատների և հեռավորության, բայց որովհետև կետի դիրքը որոշվում էր փոքր գնդի մակերևույթին, առավել երկար գծերի հիման վրա (հեռավորությունները չափված էին իրական երկրագնդի վրա), ապա յուրաքանչյուր հաջորդ կետի համար ստացված էին լայնության ու երկայնության շատ ավելի մեծ թվեր, ուստի սխալները կուտակվում էին և այնքան ավելի մեծ չափով էին հանդես գալիս, որքան սկզբնակետից հեռացած էին լինում։

Պտղոմեոսը աշխարհագրական կոորդինատներ հաշվարկելիս երկրագնդի շառավիղն ընդունել է շուրջ 5300 կիլոմետր, մինչդեռ նորագույն հաշվարկումներով երկրագնդի միջին շառավիղը 6371 կիլոմետր է։ Այդ է պատճառը, որ Պտղոմեոսի նախընտրած պարամետրերով երկրագնդի մակերևույթի վրա մեկ աստիճան կենտրոնական անկյամբ ձգված աղեղը, ներկայիս 111,3 կիլոմետրի փոխարեն, ստացվել է 92,5 կիլոմետր[5]։ Այսպես, «Աշխարհագրական ձեռնարկի» Բարալա (ներկայիս Բարալեթի) և Արտեմիտա (ներկայիս Արտամետ) բնակավայրերի աշխարհագրական լայնությունների 3°11′ տարբերությունը համապատասխանում է 356 կիլոմետրի (նրանք գտնվում են միևնույն միջօրեականի վրա), ուստի մեկ աստիճան աղեղը ստացվում է 111,3 կիլոմետր։ Սակայն այդ նույն բնակավայրերի՝ «Աշխարհագրական ձեռնարկում» ներկայացված լայնությունների տարբերությունը 3°50′ է և այդ տվյալներով Պտղոմեոսի ընդունած երկրագնդի մեկ աստիճան աղեղը ստացվում է 92,5 կիլոմետր։

Այն ուսումնասիրողները, որոնք փորձում են հաստատել, թե VII դարի «Աշխարհացույցը» Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկի» ընդօրինակու-

---

5 Պտղոմեոսի ընդունած, այսպես կոչվող, ոլիմպիական ստադիոնը (ասպարեզը) համապատասխանում է 185 մետրի, որովհետև մեկ աստիճան աղեղը, ըստ Պտղոմեոսի, 500 ստադիոն է։

թյունն է, պետք է նկատի ունենալ, որ «Աշխարհացույցի» տեքստում տրված չափագրություններում, կղզիների պարագծերի, հեռավորությունների, ինչպես նաև գրված լայնությունների ու երկայնությունների չափի միավորը ոչ թե Պտղոմեոսի ընդունած ողիմպիական ասպարեզն է՝ 185 մետրը, այլ այն ասպարեզը, որ համապատասխանում է 158,946 մետրի[6]։

Հայտնի է, որ կիսավարտ վիճակում է թողնվել 1565 թ. Պտղոմեոսի տվյալներով վերծանված պատմական Հայաստանի քարտեզը[7]։ Նույնպիսի վախճան են ունեցել Անգլիայում և Գերմանիայում ձեռնարկված քարտեզագրական աշխատանքները[8]։ Թվարկված բոլոր աշխատանքները մնացել են կիսավարտ ու դադարեցվել են, որովհետև տվյալների լուրջ անհամատեղություն են հանդիպել քարտեզի յուրաքանչյուր մանրամասնը տեղադրելիս։ Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկում» շարադրված կետերի լայնությունները և երկայնությունները, որ հաշվարկված են փոքր շառավիղ ունեցող գնդի մակերևույթի վրա, քարտեզ վերծանելու նպատակով պետք է նախօրոք ուղղել դիֆերենցիալ հավասարումից ստացված մեծություններով[9]։ Դրանցից մի քանիսի արժեքները ներկայացված են ստորև բերվող աղյուսակներում, մոտավոր ճշտությամբ, ընդհանուր պատկերացում տալու համար, թե ինչպիսի տարբերությամբ են այդ լայնությունները և երկայնությունները համեմատվում մեր օրերի տվյալների հետ։

Աշխարհագրական լայնություններ		Տարբերությունը
Ըստ Պտղոմեոսի	ներկայիս հաշվարկումներով	
39 00′	37°24′	+ 1 36′
40 00′	38 12′	– 1 48′
41 00′	39 00′	+ 2°00′
42 00′	39 48′	+ 2 12′
43 00′	40 36′	+ 2 24′
44 00′	41 24′	+ 2 36′

Պտղոմեոսի հաշվարկած աշխարհագրական երկայնությունները երկրագնդի ներկայիս պարամետրերով արտահայտելիս օգտագործված են դիֆերենցիալ ուղղիչ գործակիցներ, որոնք կախված են աշխարհագրական լայնու-

6 «Աշխարհացույցում» Կորսիկա կղզու երկարագիծը 400 մղոն է, Սարդինիա կղզունը՝ 680, իսկ Կրետե կղզունը՝ 330. սակայն Կորսիկա կղզու պարագիծը ներկայիս չափումներով շուրջ 640 կիլոմետր է, Սարդինիա կղզունը՝ 980, իսկ Կրետե կղզունը՝ 500։ Այս եզրահանգումը չափի միավորի վերաբերյալ հաստատված է նաև Սև և Կասպից ծովերի հեռավորությամբ և այլ տվյալներով։

7 Այդ կիսավարտ քարտեզը, լատիներեն մակագրություններով, որ կազմել է Մերկատոր, ներկայացված է Հ. Խանդամյանի Ատլասում (Փարիզ, 1963)։

8 D. M. Lang, Armenia gradle of civilization, London, 1970. E. Simek, Velka Germania, Brno, 1949.

9 Վերահաշվարկման այդ բանաձևերը շարադրված են նաև П. С. Закатов, Курс высшей геодезии (М., 1950, էջ 127) աշխատությունում. փոքր գնդի մակերևույթից որևէ կետ փոխանցում են առավել մեծ շառավիղ ունեցող այն գնդի մակերևույթի վրա, որը ներկայումս ընտրված է որպես ռեֆերենց սֆերոիդ։

թյուններից։ Ուստի ստորև բերվող աղյուսակում պտղոմեոսյան երկայնությունների (72°, 74°, 76° և 78°) այն ժամանակի նշանակությունները տրված են ըստ ներկայիս հաշվարկված 37°24′, 38°12′, 39°, 39°48′, 40°36′ և 41°24′ լայնությունների։

Երկայնությունը ըստ Պտղոմեոսի	Ներկայիս լայնությունները					
	37°24′	38°12′	39°00′	39°48′	40°36′	41°24′
	Ներկայիս երկայնությունները					
72°00′	40°15′	40°16′	40°17′	40°19′	40°20′	40°22′
74°00′	41°56′	41°58′	41°59′	42°01′	42°03′	42°05′
76°00′	43°37′	43°40′	43°41′	43°43′	43°45′	43°47′
78°00′	45°19′	45°21′	45°23′	45°25′	45°27′	45°30′

Պտղոմեոսի հաշվարկած կոորդինատները դիֆերենցիալ ուղղիչ մեծություններով ուղղելուց հետո հնարավոր եղավ պատմական Հայաստանի բոլոր բնակավայրերը, որոնք նշված էին Պտղոմեոսի «Աշխարհագրական ձեռնարկում», տեղայնացնել ներկայիս բնակավայրերի ու հայտնաբերված ավերակների հետ։ Այժմ գոյություն ունեցող քաղաքներից մի քանիսը ճշգրտորեն համատեղվում են Պտղոմեոսի կոորդինատների հետ՝ պահպանելով և այն ժամանակի անունները (Արտամետ, Կապան, Խոյ, Վան, Սղերդ, Սիլվան, Աստապատ, Երվանդաշատ, Սանամեր, Արտաշատ, Արմավիր, Թալին, Կարս, Դսեղ, Բարաձա, Բայկան, Կորցախի, Պիտարեթի, Դարահինի, Սիֆան, Բիանա և այլն[10])։

Պտղոմեոսի ներկայացրած բնակավայրերի աշխարհագրական լայնություններն ու երկայնությունները համեմատվել են այժմյան բնակավայրերի կոորդինատների հետ։ Այդ տարբերությունները ցուցադրում են Պտղոմեոսի հաշվարկած աշխարհագրական լայնություններում և երկայնություններում առաջացած սխալը։ Պտղոմեոսը բնակավայրերի կոորդինատները հաշվարկել է տասը բոպեի ճշտությամբ, ուստի տեղայնացման ընթացքում այդ մեծության տարբերություն ստանալիս չպետք է կասկածել տեղայնացված բնակավայրի տեղադիրքի իսկության վերաբերյալ, որովհետև այդ տարբերությունը որոշ դեպքերում, հավանականության տեսության համաձայն, կարող էր ստացվել կրկնակի, իսկ առավել աննպաստ դեպքերում՝ նաև եռակի մեծությամբ[11]։

«Աշխարհագրական ձեռնարկում» Պտղոմեոսը նշել է Աբոս անվամբ լեռ, որն ըստ լայնության ու երկայնության համատեղվում է Արարատ լեռան հետ։ Պտղոմեոսը հայտնել է, որ «Կորդվաց լեռների կենտրոնը գտնվում է երկայնության 75°00′ (42°50′) և լայնության 39°40′ (37°48′) տեղանքում», որ հա-

10 Այս համատեղությունները հաստատում են մեր այն եզրահանգումները, որոնց հիման վրա հաշվարկված են Պտղոմեոսի տվյալները, ուստի ըստ իս հնարավոր է վերծանել անցյալի ցանկացած ռեգիոնի քարտեզը՝ արտածված այդ դրույթների հիման վրա։

11 Բնակավայրերի տեղայնացման, ինչպես և այլ մանրամասների օգտագործման նպատակներով նկատի է առնված նաև Թուրքիայի Ատլասը (A. Tanoğlu, Atlas of Turkey. Istanbul, 1964).

մատեղվում է Վանա լճից հարավ գտնվող լեռների հետ[12]. Կորդվաց լեռների միջ Պտղոմեոսի մոտ ընդգրկված է նաև Ագարակի լեռնաղանգվածը։

Լեռներից ու լեռնաշղթաներից բացի Պտղոմեոսը շեշտել է նաև գետային ցանցը դարձյալ աշխարհագրական կոորդինատների օգնությամբ. այսպես, «Արաքս գետի ակունքը,— գրել է Պտղոմեոսը,— գտնվում է երկայնության 76°30′ և լայնության 42°30′ տեղանքում». ըստ երևույթին Արաքս գետի ակունք է համարվել ոչ թե Բյուրակն լեռնաղանգվածը, այլ այդ գետի արևելյան վտակներից մեկը՝ Ախուրյանը, երկայնության 44°00′ և լայնության 40°11′ տեղանքը։ Աշխարհագրական այդ տեղադիրքը համատեղվում է Արփի լճի հետ, որ Պտղոմեոսի ժամանակ ըստ երևույթին ընդունված է եղել որպես Արաքս գետի ակունք։

«Աշխարհագրական ձեռնարկում» Պտղոմեոսը Տիգրիս գետի ակունք է նշել, համաձայն կոորդինատների, այդ գետի Կեծան (Արևելյան Տիգրիս—Քեսան) վտակը, որ սկիզբ է առնում Ռշտունյաց լեռներից[13]։

Պտղոմեոսը հիշատակել է մեկ այլ լեռնաշղթա, որը «Եփրատ գետի բեկման տեղում հարում է Եփրատին երկայնության 71°30′ և լայնության 40°30′ կետում»։ Այդ լեռնաշղթայի վերջավորությունը, ըստ Պտղոմեոսի, ձգվում է մինչև երկայնության 77°00′ և լայնության 41°00′ տեղանքը. այն համապատասխանում է հայկական Տավրոսին, որ սկսվում է Եփրատ գետի բեկման կետից, երկայնության 30°15′ և լայնության 38°23′ տեղանքից ու շարունակվում մինչև երկայնության 44°30′ և լայնության 38°40′ տեղանքը։

Ըստ Պտղոմեոսի «Պարիադրես լեռնաշղթայի վերջավորությունները գտնվում են երկայնության 75°00′ և լայնության 43°20′, ինչպես նաև երկայնության 77°00′ և լայնության 42°00′ տեղանքում»։ Այդ կետերի կոորդինատներով Պարիադրես լեռնաշղթայի սկիզբը Մեծ Մասիսի ստորոտներն են Արաքս գետի ափին, իսկ վերջավորությունը համատեղվում է Մեծրաց (Զախիրբաբա) լեռնաշղթայի վերջում գտնվող Կարմիր Փորակ (Ալահյուաքբեր) լեռների հետ։ Այս տվյալների համաձայն որպես Պարիադրես լեռնաշղթա Պտղոմեոսը ընդունած է եղել Հայկական պարը և որպես նրա շարունակություն՝ Մեծրաց լեռնաշղթան և նրա վերջին լեռնազագաթը։

Պտղոմեոսը նշել է նաև Անտիտավրոս լեռնաշղթան ու հայտնել նրա կենտրոնական կետի կոորդինատները՝ լայնությունը 41°40′ և երկայնությունը 72°00′։ Նկատի ունենալով այդ կոորդինատները և Պտղոմեոսի նշումը այն մասին, որ Անտիտավրոսը շարունակվում է Եփրատ գետից այս կողմ, դեպի պատմական Հայաստանի տարածքը, ակնհայտ է դառնում, որ Բարձր Հայքի լեռները այն ժամանակ անվանվել են Անտիտավրոս. լեռնաշղթայի կենտրոնական կետի կոորդինատները համատեղվում են Մերջան (Աղբաբա) գագաթի հետ, Բարձր Հայքի լեռների կենտրոնում։

---

12 Այստեղ և հետագայում Պտղոմեոսի ներկայացրած լայնությանն ու երկայնությանը կից փակագծերում տրված են նոր կոորդինատները ճշգրտված դիֆերենցիալ ուղղիչ մեծությամբ՝ փոխանցված երկրագնդի նոր պարամետրերով արտահայտված մակերևույթի վրա։ Արարատ լեռը Արոս է անվանված նաև А. В. Амфитеатров, Армения и Рим (СПб, 1918) աշխատության 35 էջում, սակայն աղբյուրը չի նշված։

13 Տիգրիս գետի ընթացքն, ըստ Ստրաբոնի, շարունակվել է Տոսպ լճի միջով։ Դա գագաթնակետ թյուրիմացության արգասիք է։

«Աշխարհագրական ձեռնարկում» հիշատակված է Ուդակեսպիս լեռնաշղթան, որի կենտրոնական կետի լայնությունն է 40°00′ (38°20′), երկայնությունը՝ 80°30′ (47°20′)։ Ուդակեսպիս է կոչվել Քոշաթաղի լեռնաշղթան։

Բացի Տոսպիտիս լճից (ըստ Ստրաբոնի՝ Արսենե) Պտղոմեոսը նշել է նաև Լիքնիտիս լճի երկրաչափական կենտրոնը աշխարհագրական կոորդինատներով, որ համապատասխանում է Սևանա լճի տեղադիրքին։

Պտղոմեոսը Մեծ Հայքի սահմանում նշել է մի երրորդ լիճ ևս, Արսեսալիմ անվամբ, որը երկրաչափական կենտրոնի աշխարհագրական տեղադրությամբ համապատասխանում է Ուրմիա լճին[14]։

Պտղոմեոսի հիշատակած Կասպիոն լեռնաշղթայի հարավի կոորդինատները համատեղվում են Սոհունդ լեռան հետ. նշված լեռնաշղթայի հյուսիսային գագաթի կոորդինատները համատեղվում են Հինալ լեռան հետ։ Այդ երկու խոշոր գագաթների մեջ Պտղոմեոսը ընդհանրացրել է առանձին լեռնաշղթաները մեկ ողնաշարում՝ հյուսիսում Արեգունի և Զանգեզուրի լեռնազանգվածները, իսկ հարավում՝ Ղարադաղի, ապա՝ Սոհունդի լեռնաբազուկները։

Պատմական Հայաստանի այդ ժամանակաշրջանի սահմանները Պտղոմեոսը նշել է ոչ թե աշխարհագրական նկարագրությամբ, այլ ճշտորոշել է տեղում ամրացված քարասյուների 13 կետերի աշխարհագրական կոորդինատներով։ Այդ կետերից առաջինը, կոորդինատների համաձայն, գտնվել է Եփրատ գետի Քյաղթա աջ վտակի դիմաց և բաժանել է պատմական Հայաստանի տարածքը Ասորիքից ու Փոքր Հայքից. սահմանային երկրորդ կետը եղել է Արևելյան Պոնտոս լեռնաշղթայի Խուրպոր գագաթի վրա, Կելկիտ գետի ակունքում և Մեծ Հայքը բաժանել է Փոքր Հայքից ու Կապադովկյան Պոնտոսից։ Սահմանային երրորդ կետը գտնվել է Աճարա-Իմերեթյան լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան հատվածում և բաժանել է պատմական Հայաստանը Կոլխիդայից ու Կապադովկյան Պոնտոսից. չորրորդ սահմանային կետով պատմական Հայաստանը բաժանվել է Կոլխիդայից ու Վրաստանից. այդ սահմանակետը գտնվել է Աճարա-Իմերեթյան լեռնաշղթայի վրա, Սուպսա գետի ակունքի մոտ։ Սուրամի լեռնաշղթայի հարավային վերջավորությունում՝ Կուր գետի ափին է եղել հինգերորդ սահմանակետը։ Վեցերորդ սահմանակետը գտնվել է Աղվանք (Ալազան) գետի աջ ափին, Սղնախ բնակավայրի մոտ և բաժանել է Մեծ Հայքը Վրաստանից ու Աղվանքից[15]։

Սահմանային երեք հաջորդական կետերը Կասպից լճի արևմտյան ափին էին, սակայն այն ժամանակ Կասպից լճի ջրի մակարդակը 12,5 մետր բարձր լինելու հետևանքով ներկայիս ափագիծը գտնվել է շուրջ 60 կիլոմետր արևմուտք։ Սահմանային տասներորդ կետը գտնվել է Հաշիշայ գետի աջ ափին, Թավրիզի մոտ և բաժանել է Սյունիք ու Մարդաստան նահանգները Մարաստանից. հաջորդ սահմանակետը գտնվել է Կապուտան (Ուրմիա) լճի արևմտյան ափին (նախկին Կասբք բնակավայրի տարածքում), բաժանելով

---

14 Ստրաբոնի (մ. թ. ա. 65 թ.—մ. թ. 21 թ.) մոտ այդ լիճը անվանված է Մանտիանա (Կապուտ)։

15 «Աղվանքի հարավային սահմանի ամբողջ երկարությամբ տարածվում է Հայաստանը, որ հարուստ է դաշտերով ու լեռներով, ինչպես Կոմբյուսենն, որ գտնվում է այնտեղ. ուր Վրաստան, Աղվանք և Հայաստան իրար են կտրում» (Ստրաբոն, թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 31)։

պատմական Հայաստանը Մարաստանից ու Ասորեստանից։ Սահմանային 12-րդ կետը Տիգրիս գետի ձախ վտակ Խաբուրի ափին է եղել և բաժանել է պատմական Հայաստանը Ասորեստանից ու Միջագետքից. սահմանային վերջին՝ 13-րդ կետը գտնվել է Մասիուս լեռնաշղթայի հարավային ստորոտում, այսպես կոչված Արքայական պողոտայի վրա, Մարդինի լեռնանցքում և բաժանել է պատմական Հայաստանի տարածքը Միջագետքից ու Ասորիքից. այդտեղից սահմանը շարունակվել է Ղարաջադաղ լեռների հարավային ստորոտներով մինչև Եփրատ գետը՝ սահմանային առաջին կետը։

Պտղոմեոսը իր «Աշխարհագրական ձեռնարկում» Մեծ Հայքը ներկայացրել է 23 նահանգներով։ Այդ նահանգները նկարագրել է աշխարհագրական տեղադրությամբ, սկսած արևմուտքից դեպի արևելք, հաջորդականությունը պահպանելով հյուսիսից հարավ. բնակավայրերը խմբավորված են ըստ այդ նահանգների[16]։

Պտղոմեոսի տված կոորդինատների ու նկարագրության համաձայն Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան անկյունում էր Կատարձեն (ըստ Ստրաբոնի՝ Կաղարջք) նահանգը[17], որ արևմուտքից սահմանակից էր Կապադովկյան Պոնտոսին՝ Պարխարի (Լազիստանի) լեռնաշղթայով, իսկ հյուսիսում Կոլխիգային՝ Մեսխեթի (Աճարա-Իմերեթյան) լեռնաշղթայով. հարավում՝ Բասիլիսեն նահանգին։ Կատարձեն նահանգը արևելքում սահմանակից էր Տոսարեն նահանգին Մոսխական (Արսիանի) լեռնազանգվածով, իսկ Բոքաս նահանգին՝ Մեղրաբունի (Ծորոխի ու Արսիանի) լեռներով։ Կատարձեն նահանգում Պտղոմեոսը նշել է (կոորդինատներով) երեք քաղաք՝ Սուրտա (ներկայիս Շավշատ), Ազատա (Արտվին) և Սալա (Խալա)։ Բոլոր բնակավայրերի տեղայնացումը կատարված է աշխարհագրական կոորդինատների հիման վրա։

Տոսարեն նահանգը արևմուտքում սահմանակից էր Կատարձեն նահանգին, հյուսիսում՝ Իբերիային (Վրաստան)՝ Մեսխեթի լեռնաշղթայով։ Արևելքում Տոսարեն նահանգը բաժանված էր Օբարեն նահանգից Սամսարի լեռնաշղթայով մինչև Կուր գետը, իսկ Կոլթեն նահանգից՝ Կարմիր Փորակի և Զարիշատի լեռներով. հարավում Տոսարեն նահանգը սահմանակից էր Բոքաս նահանգին Արսիանի լեռնազանգվածով։ Տոսարեն նահանգում Պտղոմեոսը նշել է վեց քաղաք՝ Ասկոհրա (ներկայիս Ածկուրի), Կոձալա (Կործախի), Կոտոմանա (Կուտկալե), Սեգալա (Արտահան, Քաչաց քաղաք), Բարաձա (Բարալեթի) և Տաստինա (Մերգենիկ)։

Օբարեն նահանգը արևմուտքում սահմանակից էր Տոսարենին, հյուսիսում՝ Իբերիային՝ Կուր գետի միջին հոսանքով, արևելքում՝ Օտեն նահանգին՝ Աղստև գետի ընթացքով, հարավում՝ Կոլթեն և Կոտայա նահանգներին՝ Բա-

---

16 Բոլոր տվյալները հաստատում են, որ սահմանագծումների աշխարհագրական կոորդինատները Պտղոմեոսի կողմից չեն հաշվարկված, այլ ընդօրինակված են իր ժամանակի պաշտոնական փաստաթղթերից։ Հայտնի է, որ Սերապիոն Անտիոքացին, որ Պտղոմեոսից 200 տարի առաջ է ապրել, ճիշտ այդպիսի աղյուսակ է ունեցել իր աշխատությունում. թվական նույն մեծություններով ու նկարագրությամբ (տե՛ս L. Bagrow. The origin of Ptolemy's Geographia, էջ 321)։

17 Պտղոմեոսի ներկայացրած 23 նահանգներն են. Կատարձեն, Տոսարեն, Օբարեն, Սակասեն, Բասիլիսեն, Բոքաս, Կոլթեն, Կոտայա, Սոգուկեն, Օտեն, Ակիլիսեն, Բոլբեն, Բագրևանդ, Մարդոյն, Սիրակեն, Կասպիոն, Աստավնիտիս, Արսեսա, Տոսպ, Սոփեն, Անձիտեն, Կորդուեն և Կորիայա։

զումի լեռնաշղթայով։ Օբարեն նահանգում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Վալա (ներկայիս Գանձա), Բատինա (Բավրա), Դիզակա (Դսեղ) և Պտուսա (Պիտարեթի, Ցուրտավ)։

Սակասեն (Սակաշեն) նահանգի մասին Ստրաբոնը հայտնել է, որ «Կովկասի սակի ցեղերը, գրավելով Հայաստանի բարեբեր հողերը, թողել են իրենց անունը այդ շրջանի վրա», այդ նահանգը գտնվել է Աղվանք և Կուր գետերի միջև՝ գրավելով Կամբեճ (Իորի) գետի երկու ափերի տարածքը[18]։ Սակասեն նահանգը հարավից սահմանակից էր Օտեն և մասամբ Օբարեն նահանգներին Կուր գետի ընթացքով, արևելքից եզերված էր Աղվանք գետի ստորին հոսանքով, հյուսիսից սահմանակից էր Վրաստանին և Կուր ու Խրամ գետերի միացման տեղանքից շարունակվում էր հյուսիս-արևելյան ուղղությամբ դեպի Ալազան գետը։ Հյուսիս-արևելքում Սակասեն նահանգը սահմանակից էր Աղվանքին՝ Ալազան գետի հոսանքով մինչև Կուր գետին միանալը։ Պտղոմեոսը այդ նահանգում նշել է երեք քաղաք՝ Սատափարա (ներկայիս Սղնախ), Տոգա (Փոյլի) և Սանտուտա (Սողանլու)։

Մեծ Հայքի հյուսիս-արևմտյան անկյունում էր Բասիլիսեն նահանգը, որ սահմանակից էր հյուսիսում Կապադովկյան Պոնտոսին՝ Խաղտյաց (Լազիստանի) լեռնաշղթայով, հարավում Ակիլիսենին՝ Անահտական, Կապույտ և Սեղրաբունի (Շակշակի) լեռներով, իսկ հյուսիս-արևելքում՝ Կատարձենին, իր տարածքի մեջ ընդգրկելով Ճորոխ գետի բազմավտակ ակունքը. Բասիլիսեն նահանգում Պտղոմեոսը նշել է երեք քաղաք՝ Աթուա (ներկայիս Բլուր), Վարութա (Իսպիր) և Բրեսոս (Բայբերդ)։

Բոքաս նահանգը արևմուտքում սահմանակից էր Բասիլիսենին, Կատարձենին և Ակիլիսենին՝ Ծիրանյաց (Ղարշաբաղարի), ապա Մեղրաբունի, ինչպես նաև Արսիանի լեռնազանգվածներով[19], հյուսիսում՝ Տոսարենին՝ Արսիանի լեռնաշղթայով, արևելքում՝ Կոլթեն նահանգին (մասամբ Կարմիր Փորակ լեռնաշղթայով), հարավում՝ Բոլբեն նահանգին՝ Հայկական պարի Սուկավետ և Այծպտկունք (Փալանթոքյանի) լեռնազանգվածներով։ Բոքաս նահանգում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Տինիսա (ներկայիս Թորթում), Խասիրա (Խորասան), Քոլուա (Օլթի) և Սանա (Սանամեր)։

Կոլթեն նահանգը արևմուտքում սահմանակից էր Բոքաս և Տոսարեն նահանգներին՝ Ջարիշատ և Կարմիր Փորակ լեռներով մինչև «Հյուսիսային ծովը»՝ Զբլղր լիճը, հյուսիսում՝ Օբարեն նահանգին՝ Փամբակի լեռնաշղթայով, արևելքում՝ Կոտայա նահանգին՝ սկսած Արփի լճից, Ախուրյան գետի ընթացքով մինչև Հայկական պարը, հարավում՝ Բագրևանդ նահանգին՝ Հայկական պար լեռնաշղթայով։ Պտղոմեոսը Կոլթեն նահանգում նշել է երկու քաղաք՝ Խորսա (ներկայիս Կարս) և Բրիձակա (Արտագերս, Սարիղամիշ)։

Կոտայա (Կոտայք, Կոտեից) նահանգը արևմուտքում սահմանակից էր Կոլթեն նահանգին, արևելքում՝ Սոդուկեն (Սողք) նահանգին՝ Գեղամա լեռնաշղթայով, հարավում՝ Մարդոյե (Մարդաստան) նահանգին՝ Հայոց ձորի և Փոքր Սասիս լեռնագագաթի միացման գծով, իսկ Բագրևանդին՝ Հայկական

---

18 Այդ նույն սահմաններում է ցույց տրված Սակասեն նահանգը Միխիթարյանների 1849 թ. հրատարակած Ատլասում, Փոքր Սյունիք անվամբ։

19 Բոնխեր ցեղը, որի անունից առաջացել է Բոքաս նահանգի անվանումը, ապրում էր Սփրատից հյուսիս՝ հունա-հռոմեական հեղինակների մոտ հիշվում է Βογκαι.

պար լեռնաշղթայով։ Կոտայա նահանգում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Թալինա[20] (Թալին), Արմավիրա (Արմավիր), Արտաքստտա (Արտաշատ) և Դարանիսա (Երվանդաշատ)։ Վերջինս, ըստ Խորենացու, գտնվում է «միակտուր ապառաժ բլուրի վրա, որը շուրջ պատում է Երասխը, իսկ դիմացից էլ հոսում է Ախուրյան գետը»[21]։

Սոդուկեն (Սոդք) նահանգն ընդգրկած է եղել Սևանա լճի ավազանը[22]. արևմուտքում Սոդուկենը սահմանակից էր Կոտայա (Կոտայք) նահանգին՝ Գեղամա լեռնաշղթայով, հարավում՝ Մարդոյլ (Մարդաստան) նահանգին՝ Հայոց ձորի լեռնաշղթայով, իսկ արևելքում՝ Օտեն նահանգին Միափորի լեռնաղանգվածով, նրա Մուրղուզ գագաթով, ապա արևելյան Սևանի լեռների շարքով։ Սոդուկեն նահանգում Պտղոմեոսը նշել է երեք քաղաք՝ Զողաքարա (ներկայիս Գեղարդավանք), Մաթուստանա (Բարձրունի, Մարտիրոս) և Տերուա (Մող բնակավայրի ավերակները)։

Օտեն (Ուտիք) նահանգը արևմուտքում սահմանակից էր Սոդուկեն նահանգին Միափորի և Սևանի լեռնաշթաներով, հյուսիսում՝ Օբարեն նահանգին Աղստև գետի ստորին հոսանքով, հարավում՝ Սիրակեն (Սյունիք) նահանգին՝ Հինալ, Գյամիշ և Մռավ լեռներով, իսկ Կասպիոնին (Փայտակարան)՝ Թարթառ գետով մինչև Կուրը։ Օտեն նահանգը արևելքում սահմանակից էր Սակասեն նահանգին՝ Կուր գետի ընթացքով։ Օտեն նահանգում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Էլիսմա (ներկայիս Թոուզ, որ համատեղվում է Հունարակերտ բնակավայրի հետ ըստ Մղոնաչափքի անալիտիկ տվյալների), Խոլուատա, Արսարատա և Սակալբինա[23]։

Ակիլիսեն (Եկեղյաց, Անահտական) նահանգը հարավում սահմանակից էր Աստավնիտիս նահանգին՝ Բարձր Հայքի (Գայլախազուտ—Զեմալդաղ և Մնձուր, Մունզուր) լեռնաշղթայով, հյուսիսում՝ Բասիլիսեն նահանգին՝ Անտիպոնտական լեռնաշղթայով (Անահտական և Կապույտ լեռներով), հյուսիս-արևելքում՝ Բոքաս նահանգին, իսկ արևելքում՝ Բոլբեն նահանգին՝ Մեղեդուխի և Ծիրանյաց լեռներով։ Պտղոմեոսը Ակիլիսեն նահանգում նշել է երեք քաղաք՝ Զորիգա (ներկայիս Բագառինջ), Էլեգիա (Իլիջա) և Կոդանա (Երգնկա)։

Բոլբեն նահանգը արևմուտքում սահմանակից էր Աստավնիտիս և Ակիլիսեն նահանգներին՝ Սանջարի ու Մեղեդուխի (Շակշակի) լեռներով, իսկ հյուսիսում՝ Բոքաս նահանգին՝ Հայկական պարի Այծպտկունք (Փալանթոքյան), ապա Սուկավետ (Աղրիդաղ) ու Շարհան լեռնաղանգվածներով, արևելքում Արսեսա նահանգին՝ Արածանի գետով, հարավում՝ Անձիտեն (Աղձնիք) նահանգին՝ Հայկական Տավրոս լեռնաշղթայով (Սիմ լեռներով)։ Պտղոմեոսը Բոլբեն նահանգում նշել է երկու քաղաք՝ Տարեհինա (ներկայիս Դարահինի) և Քոլուա (Խնուս)։

---

20 Թալինը հիշատակված է և Անանիա Շիրակացու թվաբանական խնդիրներում։

21 Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց, Երևան, 1940, Բ. լիբ. էջ 109։

22 Լեոն տեղայնացրել է Շիրակի հետ. ուրարտական սեպագրերում՝ Սուինիսա։

23 Օտեն նահանգում Պտղոմեոսի նշած Խոլուատա բնակավայրը տեղայնացվում է Շամքոր քաղաքից շուրջ չորս կիլոմետր արևելք ընկած ավերակների հետ։ Այդ նահանգի Սակալբինա բնակավայրը տեղայնացվում է Գանձակ քաղաքից շուրջ տասը կիլոմետր հարավ-արևելք ընկած ավերակների հետ։ Պտղոմեոսի նշած Արսարատա բնակավայրը տեղայնացվում է Մինգեչաուր քաղաքից շուրջ հինգ կիլոմետր հարավ-արևելք ընկած տեղանքի հետ, ուր հայտնաբերված են հնագույն ավերակներ։

Բագրևանդ նահանգը արևմուտքում սահմանակից էր Բոլբեն նահանգին, հյուսիսում՝ Կոլթեն և Կոտայա նահանգներին՝ Հայկական պարի Շատիկ և Բարգողյան լեռնաշղթաներով, հարավում՝ Արսնսա և Տոսպ նահանգներին՝ Ծաղկանց լեռնաշղթայով, իսկ արևելքում՝ Մարդոյե նահանգին՝ Թափարիզ և Մ. Մասիս գագաթների միացման գծով։ Բագրևանդ նահանգում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Անարիոն (ներկայիս Հին Բայազետ), Զարուհանա (Բագավան), Կիտամոն (Դիադին) և Փավսիա (Խեդիկ)։

Մարդոյե (Մարդաստան) նահանգը արևմուտքում սահմանակից էր Տոսպ նահանգին՝ Կոտուրի (Վասպուրականի) լեռնաշղթայով, արևելքում՝ Սիրակեն (Սյունիք) նահանգին՝ Կասպիոն լեռնաշղթայով, հյուսիս-արևելքում՝ Սոդուկեն նահանգին՝ Հայոց ձորի լեռնաշղթայով[24]։ Հարավում Մարդոյե նահանգին սահման էր ծառայում Արսեսալիմ (Ուրմիա) լճի հյուսիսային ափագծի փոքր հատվածը, ապա Կորիայա նահանգը՝ Նոր Շիրական լեռնաշղթայով։ Հյուսիսում Մարդոյե նահանգը սահմանակից էր Կոտայա նահանգին՝ Փոքր Մասիսի և Հայոց ձորի միացման գծով, իսկ հյուսիս-արևմուտքում՝ Բագրևանդին Մասիս-Թափարիզի գծով։ Մարդոյե նահանգում Պտղոմեոսը նշել է ութ քաղաք՝ Նաքսուանա (Նախիջևան), Սիգուա (Սինիխ), Աստականա (Աստապատ), Խոլիմա (Հեր, Խոյ), Տերեբիա (Արապլար), Դաուդիանա (Մարակերտ), Կոլսա (Կալա) և Մաիպա (Տաշրում, Թոռնավան)։

Սիրակեն (Սյունիք) նահանգը արևմուտքում բաժանված էր Մարդոյե նահանգից Կասպիոն (Զանգեզուրի) լեռնաշղթայով մինչև Հաջիշայ գետը՝ Մարաստանի սահմանը, հյուսիս-արևմուտքում՝ Սոդուկեն նահանգից Արեգունի (Արևելյան Սևանի) լեռներով, հյուսիսում՝ Օտեն նահանգից Մռավի լեռների Գյամիշ լեռնաշղթայով, արևելքում սահմանակից էր Կասպիոն նահանգին՝ Ղարաբաղի սարահարթով մինչև Մարաստան, Մարաստանից բաժանված էր Թավրիզ (Հաջիշայ) գետով, որը մոտավորապես զուգահեռ է Ուդակեսպիա (Քոշաթաղ) լեռնաշղթային և ներկայացնում էր Հայաստանի սահմանը Մարաստանի հետ։ Պտղոմեոսը Սիրակեն նահանգում նշել է չորս քաղաք՝ Զորզոհա (ներկայումս համատեղվում է Զուրզուա ավերակ բնակավայրի հետ), Կապոհտա (Կապան-Ղափան)[25], Տիգրանոամա (ըստ երևույթին Տիգրանավան, որ համատեղվում է Ահար բնակավայրի հետ) և Կուբինա (Վայկունիք)։

Կասպիոն (Կասբք. Փայտակարան) նահանգին[26] արևմուտքում սահմանակից էր Սիրակեն (Սյունիք) նահանգը, արևելքից՝ Կասպից լճի արևմտյան ափագիծը, հյուսիսից այն եզերված էր Թարթառ, ապա Կուր գետով մինչև Կասպից լիճը, հարավից սահմանակից էր Մարաստանին։ Կասպիոն նահանգում Պտղոմեոսը քաղաք չի նշել. այդ նահանգում էին գտնվում Փայտակարան և Վարդանակերտ քաղաքները։ Մարաստանի բաժնում տրված բնակա-

---

24 Նահանգի անվանումը առաջացել է մարդ ցեղի անունից. Ատրպատականից մարդերը գաղթել էին Հայաստան։ Վասպուրականի նահանգում նրանք կազմեցին ուժեղ նախարարություն (տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 313)։

25 Այս քաղաքի տեղայնացումը կատարված է միայն մեկ ձեռագրի տվյալների հիման վրա, մյուս ձեռագրերում կորդինատները այլ են։

26 Այդ ժամանակ Կասպիոն նահանգը գտնվել է Մարաստանի տիրապետության ներքո, ուստի Պտղոմեոսը «Աշխարհագրական ձեռնարկում» Կասպիոն նահանգի մասին շարադրել է երկրորդ հատորի 85-րդ էջում։

վայրերի ցանկում այդ քաղաքները բացակայում են. թերևս դրանք III կամ IV դարերի ծնունդ են, որովհետև նշված են «Մղոնաչափքում»[27]։

Աստավնիտիս (ըստ Ստրաբոնի՝ Փավնիտիս) նահանգը արևմուտքում և հյուսիս-արևմուտքում բաժանված էր Կապադովկիայից (Փոքր Հայքից) Եփրատ գետով, հյուսիսում սահմանակից էր Ակիլիսենին՝ Բարձր Հայքի Գայլախազուտ (Ջեմալդաղ լեռնաշղթայով, արևելքում՝ Բոլբենին՝ Սանջար լեռնաշղթայի երկարությամբ, հարավում՝ Սոփենին (Ծոփք նահանգին)՝ Արածանի գետի ընթացքով։ Պտղոմեոսը այս նահանգում նշել է մեկ քաղաք՝ Կարխիլ (ներկայիս Քրգի)։

Արսեսա (Արսիանի) նահանգի անունը, ըստ երևույթին, ստացվել է Արածանի գետից, որ հոսում է այդ նահանգի կենտրոնով. Արսեսան ընդգրկել է Արածանիի ավազանի տարածքը։ Նահանգն արևմուտքում սահմանակից էր Բոլբենին՝ Արածանի գետով, Բյուրակն (Բինգյոլ) լեռներով. հյուսիսում՝ Բագրևանդին, արևելքում՝ Տոսպին՝ Սիփան լեռից դեպի Ծաղկանց (Ալադաղ) լեռնաշղթան ձգված լեռնաշարքով, իսկ հարավից՝ Աղձնիքին՝ Տավրոսի (Խութի) լեռնաշղթայով։ Արևելքում Արսեսա նահանգը տարածված էր մինչև Վանա լճի արևելյան և հյուսիս-արևելյան ափագիծը։ Արսեսա նահանգում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Սողոքարա (ներկայիս Բուլանըխ), Բալիսբիգա (Մուշ), Բաբիլա (Աշտիշատ) և Փանդալիա (Բաթնոց)։

Տոսպ (Վասպուրական) նահանգը արևելքում սահմանակից էր Մարդոյե (Մարդաստան) նահանգին Վասպուրականի (Կոթուրի) լեռնաշղթայով. հյուսիսում՝ Բագրևանդի նահանգին՝ Ծաղկանց (Ալադաղ) լեռնաշղթայով, արևմուտքից նրա սահմանն էր համանուն Վանա լճի եզրագիծը և Ծաղկանց լեռնազանգվածը։ Հարավում Տոսպը սահմանակից էր Կորեայա և Կորդուեն նահանգներին՝ Հայկական Տավրոսի լեռնաշղթայով (Կանգուարի և Աղբակ-Մենգենի լեռնազանգվածներով)։ Տոսպ նահանգում Պտղոմեոսը նշել է ինը քաղաք՝ Մաիպա (ներկայիս Թոռնավան բնակավայրը), Տասկա (Ոստան). Տոսպիա (Վան), Ազարա (Բերկրի, Մուրադիե), Բիանա (Կոթուր)[28], Արտեմիտա (Արտամետ), Փորա (Խոշապ), Սագուանա (Արծկե, Ալջավազ) և Թելբալանի (Ադամակերտ)։

Հայաստանի հարավ-արևմտյան անկյունում էր Սոփենե (Ծոփք)[29] նահանգը, որ արևմուտքից եզերված էր Եփրատ գետի ընթացքով. հյուսիսում Սոփենը սահմանակից էր Աստավնիտիս նահանգին Արածանի գետով, արևելքում՝ Անձիտեն (Աղձնիք) նահանգին Տիգրիս գետի՝ Կղեսուրքի լեռնաշղթայից սկիզբ առնող Անբար (Գյոքսու) վտակի ընթացքով՝ ակունքներից մինչև գետի արևելք թեքվելը, ապա Անբար վտակի ուղղությամբ մինչև Մասիուս լեռնաշղթան։ Սոփեն նահանգի տարածքում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Մազարա (ներկայիս Ջերմիկ բնակավայրը), Անզիտա (Դիարբեքիր-Ամիդ), Սիավանա (Սիփան) և Էլեգերդա (Հայնի)։

---

27 Հիշյալ քաղաքների տեղադրությունը որոշված է «Մղոնաչափքի» անալիտիկ տվյալներով։ Վարդանակերտի լայնությունն է 39°07′, երկայնությունը՝ 47°33′։ Փայտակարանի լայնությունն է 39°54′, երկայնությունը՝ 47°40′։

28 Այդ բնակավայրն, ըստ կոորդինատների, համապատասխանում է նաև ներկայիս Կիրատո, ինչպես նաև Լինչի, Օսվալդի քարտեզի վրա նշված Բիանի բնակավայրին։

29 Ասուրական բևեռագրերում՝ Սուպանի։

Անձիտեն (Աղձնիք, Հանձիթք) նահանգը տեղադրված էր Սոփենից (Ծոփք) արևելք։ Հյուսիսում Բոլբեն ու Արսևսա նահանգներից այն բաժանված էր Հայկական Տավրոս լեռնաշղթայով, նրա Սիմ (Կուրտիկ) լեռնազանգվածով և տարածվում էր մինչև Վանա լճի հարավ-արևմտյան եզրագիծը, արևելքում սահմանակից էր Կորդուեն նահանգին Արևելյան Տիգրիս (Ջերմ, Բոհտան), ապա Կեծան (Քեսան) վտակների հոսանքով։ Հարավում Անձիտեն նահանգին սահման էր ծառայում Հայաստանի ու Միջագետքի սահմանագիծը՝ Մուսիուս լեռնաշղթայի հարավային ստորոտները։ Անձիտեն նահանգում Պտղոմեոսը նշել է չորս քաղաք՝ Սոիտա (ներկայիս Սիլվան բնակավայրը), Բելկանիա (Բայկան), Սելգիա (Սեմեկ, Սղերդ) և Արսամասատ (Բնաբեղ)։ Տիգրանակերտի մասին Պտղոմեոսը ոչ մի տեղեկություն չի տալիս։ Պետք է նկատի ունենալ, որ ինչպես հաղորդում է Ստրաբոնը, Լուկուլլոսի արշավանքի հետևանքով քաղաքը վերածվել էր մի փոքրիկ գյուղակի, ուստի և չէր կարող տեղ գտնել «Աշխարհագրական ձեռնարկում»։ Տիգրանակերտը քարտեզի վրա տեղադրվելու է Կոստառիցի «Հռոմեական աշխարհաքարտեզի» անալիտիկ տվյալների հիման վրա և համատեղվում է ներկայիս Սելմո կամ Շելմո բնակավայրի հետ[30]։

Կորդուեն (Կորդուք) նահանգը արևմուտքում սահմանակից էր Անձիտեն նահանգին, հարավում՝ Ասորեստանին՝ Տիգրիսի Արևելյան խաբուր վտակի ընթացքով, ապա Զուգի ու Սերիմադիե լեռներով։ Արևելքում Կորդուեն նահանգը բաժանված էր Կորիայա (Կորճայք) նահանգից միջօրեականի ուղղությամբ՝ Ջողա (Ջիլո) բարձր լեռան բազուկներով, մինչև Աղբակի Ականիք (Մերքեզ) լեռնազանգվածը։ Կորդուենը Տոսպ նահանգից բաժանված էր Կանգուարի լեռներով մինչև Արտոս լեռը, ապա Վանա լճի հարավ-արևմտյան ափը։ Կորդուեն նահանգի հյուսիսային սահմանն էր Վանա լճի հարավային եզրագիծը, սահմանափակված Ռշտունյաց (Նատակ) և Կանգուարի լեռնաշղթաներով։ Կորդուեն նահանգում Պտղոմեոսը նշել է յոթ քաղաք՝ Կորրա (ներկայիս Ջեզիրե), Կոլխիս (Տմորիք), Գորդուեն (Նարլի), Արտագիգարտա[31] (Խեդրիշ), Սիայե (Մերվանե), Փերենդիս (Փերվերի, Փինդիկ) և Սարդեվա (Դերավ)։

Կորիայա (Կորճայք, Կորտիճայք) նահանգը տեղադրված էր Կորդուենից արևելք. Տոսպ նահանգից այն բաժանված էր Աղբակի, Մարդոյե նահանգից՝ Նոր Շիրականի լեռներով, արևելքից եզերված էր Արսեսալիմ (Ուրմիա) լճի արևմտյան ափագծով։ Կորիայան հարավային հատվածում Ասորեստանից բաժանված էր առանձին լեռների (ինչպես օրինակ, Ջորասպի) երկարաձգված լեռնազանգվածով. որը միաժամանակ և Հայաստանի սահմանն էր։ Կորիայա

---

30 Ընդունված է. որ Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը գտնվել է Սիլվան (ըստ Պտղոմեոսի՝ Սոիտա, իսկ ըստ Կոստառիցի՝ Սիոտա) բնակավայրի տեղում, սակայն «Հռոմեական աշխարհաքարտեզի» տվյալներն ու Պտղոմեոսի կոորդինատներն այդ չեն հաստատում։ Իրականում Տիգրանակերտը գտնվել է լայնության 38°07′ և երկայնության 41°21′ տեղադիրքում։

31 Ըստ Ստրաբոնի Կարկաթիոկերտը Ծոփքի թագավորանիստ քաղաքն էր, իսկ Մարկվարտը ուղղելով այդ անունը Արկաթիոկերտի, ենթադրում է Անգեղ բերդի ավերակների վայրում, այժմյան Էգիլի մոտ, մինչդեռ ըստ կոորդինատների համատեղվում է ներկայիս Խեդրիշ բնակավայրի հետ։ Հետաքրքիր է, որ Ստեփան Բյուզանդացին այն անվանում է Արգիշտիկերտ։

նահանգում Պտղոմեոսը նշել է մեկ քաղաք՝ Տիգրանակերտ, որը համապատասխանում է ներկայիս Կալերեշ բնակավայրին։

Պտղոմեոսը ներկայացրել է անալիտիկ տվյալներ Ասիայի երրորդ քարտեզի համար, որ պատկերել է պատմական Հայաստանը մեր թվականությունից առաջ, մասնավորապես I դարի մանրամասնությամբ, տոպոնիմիկայի ու տրանսկրիպցիայի պահպանումով, որ անփոխարինելի նյութ է գիտական ուսումնասիրությունների համար։ Պտղոմեոսի տվյալներով վերծանված ու ներկայումս կազմված միևնույն տարածքի աշխարհագրական քարտեզների համադրությամբ հնարավոր է բացահայտել էյկումենի և նրա ռեգիոնների աշխարհագրական միջավայրի դինամիկան։ Այդ քարտեզներով հնարավոր է ուսումնասիրել բնակչության էթնիկական խմբերի տեղաբաշխումը, ռոզման եղանակները, ինչպես նաև առևտրական ու ռազմական ճանապարհները։

«Աշխարհագրական ձեռնարկի» կոորդինատների ուղղումը դիֆերենցիալ գործակիցների մեծությամբ և այդ լայնությունների ու երկայնությունների հիման վրա կազմված քարտեզը, տեղադրված Պտղոմեոսի առաջարկած կոնային պրոյեկցիայի ցանցը վրա, կարծում եմ, միակ ամփոփ քարտեզագրական ճշգրիտ իրավական փաստաթուղթը կլինի մեր թվականության I դարի Հայաստանի աշխարհագրական, սոցիալ-տնտեսական, վարչական, պատմական ու այլ հարցեր ուսումնասիրելիս։

АРМЯНСКОЕ НАГОРЬЕ ПО КАРТОГРАФИЧЕСКИМ ДАННЫМ ПТОЛЕМЕЯ

Доцент М. М. ХАЧАТРЯН

(Резюме)

Картографические сведения об Армянском нагорье в «Географическом руководстве» Птолемея изложены при помощи координат, уточняющих местоположение хребтов ,отдельных вершин, рек, озер и морей, а также городов, границ и др. По этому уникальному труду, основанному исключительно на аналитических данных, до сих пор не воссозданы исторические карты, так как неизвестны исходные данные, принятые Птолемеем при вычислении координат. Мы установили, что Птолемей вычислял координаты на основе значительно меньших параметров Земли по сравнению с действительными. Начало координат он принимал восточнее Ферро, в 15° от Гринвича, опирая сеть на астрономический пункт в Александрии. Мерой длины служила не римская стадия, а олимпийская (185 м), при 500 стадиях в одном градусе дуги меридиана. Для воссоздания карт по материалам Птолемея необходимо предварительно вычислить поправки к координатам и ввести их сеть в новую систему. Нашими исследованиями «Географического руководства» восстановлены 23 области исторической Армении, существовавшие в первом веке н. э., и созданы необходимые предпосылки для изображения их на современных картах. Кроме того, появилась возможность идентифицировать населенные пункты, представленные Птолемеем при помощи координат, с ныне существующими и существовавшими населенными пунктами Армянского нагорья.